

«ԵՐԱԶ» ՊԱՏՈՒՄԱՅԻՆ ՀՆԱՐԻ  
ՏԻՊԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

*«Երազ» պատումային հնարը լայն կիրառում ունի գրականության և հատկապես մանկագրության մեջ: Հեղինակները հերոսների անգիտակցականում խորհրդավոր պատկերներ արթնացնելով՝ ընթերցողներին ծանոթացնում են նրանց ներքին հույզերին ու մտահոգություններին: Մանկագրության մեջ «երազ» պատումային հնարի տեսակների մասին առավել հստակ պատկերացում կազմելու համար անհրաժեշտություն է առաջանում դրանք խմբավորել ըստ վերջիններիս՝ պատումում կատարած գործառույթի և տիպի: Սույն հոդվածը փորձ է՝ կատարելու երազային հնարների տիպային դասակարգում՝ վեր հանելով դրանց դերն ու նշանակությունը պատումի կառուցման գործընթացում:*

**Հիմնաբառեր.** *Երազային հնար, տիպային դասակարգում, հրաշապատում երկեր, խորհրդանիշներ, մղձավանջներ, աշխարհավերջյան երազներ, անմարսողություն, որկրամոլություն, հեռազգայական երազներ, «այդ ամենը երազ էր»:*

Երազն ու երազատեսությունն իրենց ուրույն տեղն ունեն մանկական ստեղծագործություններում: Գրողները հաճախ են իրենց երկերը համեմում տարատեսակ երազային այլաբերություններով և հնարներով, որոնք մի կողմից սրում են ընթերցողի հետաքրքրությունը, մյուս կողմից էլ՝ հեղինակին հնարավորություն ընձեռում առանց կաշկանդումների շարժվել տարածաժամանակային սահմաններից դուրս մի աշխարհում, որտեղ կյանքը չի հետևում որևէ սահմանված օրենքի: Անրջային տարբեր պարունակող երկերում երազատեսությունը յուրակերպ դրսևորումներ ունի: Գրական հերոսները քնած վիճակում ստիպված են անցնել մի շարք աներևակայելի փորձություններով, ինչպես, ասենք, ճանապարհորդել քնափության աշխարհով և ետ դառնալ, երազ տեսնել նույնիսկ երազում, գողանալ ուրիշների քունը կամ քուն բերել նրանց վրա, հանդիպել հանգուցյալների, մենամարտել չարանենգ էակների դեմ՝ երազային սարսափաշախարհից դուրս պրծնելու համար, տառապել երազհարամ լինելուց և այլն: Գրական ստեղծագործություններում երազները տարբեր կերպ են դրսևորվում:

Մի շարք գիտակարգերում բազմիցս փորձ է արվել կատարել երազների տիպային դասակարգում: Հեղինակները «երազ» գրական հնարը կիրառելիս օգտագործում են երազի արդեն իսկ գոյություն ունեցող տեսակները: Գրականագետ Բ. Քամդենը, օրինակ, Շեքսպիրի ստեղծագործություններում երազներն ուսումնասիրելիս օգտվում է

երագների հետևյալ տիպային դասակարգումից. բնական, պատահական, աստվածային, սատանայական և գերբնական երագներ: (C. Camden 1936:123)

Երագների ունեցած դերը, մասնավորապես հրաշապատում երկերում և ընդհանրապես գրականության մեջ, ավելի հստակ պատկերացնելու համար անհրաժեշտություն է առաջանում տարանջատել դրանք՝ ըստ գործառույթի և տիպի: Սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ կկատարվի անգլալեզու մանկագրության մեջ երագների հիմնական տիպերին՝ փորձելով լուսաբանել դրանց դերը պատումի կառուցվածքային համակարգի մեջ:

### ***Տագնապալի երագներ***

Տագնապալի երագներն ամենալայն տարածում ունեցող երագներից են: Դրանք հեղինակի համար միջոց են ծառայում վեր հանելու հերոսի ներքին վրդովմունքը, վախերն ու տագնապները: Տագնապալի երագները հերոսին զգում են անհանգիստ վիճակի մեջ, և վերջինս տանջվում է այն մտքից, որ դրանք կարող են իրականանալ: Նմանօրինակ երագները հաճախ անտեսվում են հերոսի կողմից, եթե դրանք կրկնվող բնույթի չեն: Երբեմն էլ նա ստիպված է լինում դրանց դեմ առ դեմ դուրս գալ՝ փնտրելով լուծումներ:

Ասվածը ավելի հստակ պատկերացնելու համար սեղմ կանգ առնենք Ջ.Ք. Ռոուլինգի Հարրի Փոթերի մասին պատմող վիպաշարի վրա:

«Հարրի Փոթերը և Փյունիկի միաբանությունը» գր-

քում Հարրին մի տարօրինակ երագ է տեսնում, որում հայտնվում և անհետանում են ծնողների լուռ կերպարանքները: Տիկին Վիգլին հեկեկում է ծեր էլֆ Քրիչերի դիակի վրա, որը հսկում են Ռոնն ու Հերմայոնին՝ գլուխներին թագ դրած, իսկ Հարրին քայլում է մի միջանցքով, որի վերջում կողպված դուռ է.

*“Harry had a troubled night’s sleep. His parents wove in and out of his dreams, never speaking; Mrs. Weasley sobbed over Kreacher’s dead body watched by Ron and Hermione, who were wearing crowns, and yet again Harry found himself walking down a corridor ending in a locked door”.* (J.K.Rowling 2004: 176).

Չնայած երագը կիսամյակի սկզբին դասերի մասին ունեցած նրա մտահոգությունների արտացոլումը կարող ենք համարել, այնուամենայնիվ անհրաժեշտ է ընգծել նաև երագի փոխաբերական իմաստը՝ խորհրդանշական պատկերների տեսքով: Տղան իրեն այլևս մոտ չի զգում ծնողներին և երագում նրանց տեսնելը մի տեսակ սփոփանք է բերում: Գրողը հենց երագի միջոցով իրականացնում է հերոսի՝ ծնողների հետ լինելու բաղձանքը: Ինչպես գրում է Ս. Միպալը, հեղինակը դպրոցի «ավագների»՝ Ռոնի և Հերմայոնիի թագ կրելու միջոցով անդրադարձ է կատարում *Կարմիր թագավոր և Մպիտակ թագուհի* ավքիմիական այլաբանությանը (Sipal 2016: 105): Հենց այս գրքում է, որ այդ

երկու հերոսների կապը առավել ուժեղանում է, իսկ վերջում Ռոնին իր թիմակից ընկերները հայտարարում են «արքա»՝ թիմին հաղթանակ բերելու համար: Իսկ էլֆը մարմնավորում է տիկին Վիզլիի մահացած երեխաներին: Հեղինակն այս երազի միջոցով որոշակի կապ է ստեղծում ծեր էլֆի և մահվան միջև: Կողպված դռներով միջանցքի մասին երազային էպիզոդների ներմուծմամբ՝ հեղինակն ընթերցողին հիշեցնում է Հարրիի անհագուրդ ցանկությունը՝ պարզելու, թե ինչ կա այդ դռան հետևում:

«Մարտիկ կատուներ» վիպաշարի հեղինակները (Էրին Հանթեր) հմտորեն ստեղծում են արյունալի պատկերներով համեմված մղձավանջներ: Նրանց երկերը հարուստ են այդպիսի տեսարաններով. կատուներից մի քանիսն անգամ մահանում են իրենց երազներում՝ արյան մեջ խեղդվելով: «Ելոֆենգի գաղտնիքը» գրքում Ելոֆենգին երազում ստիպում են նայել կատվաձագերի կովին, որոնք այնքան փոքր են, որ նրանցից մի քանիսի աչքերը դեռ նույնիսկ փակ են, սակայն այնպես են իրար վնասում, որ մեծ կատուներն անգամ այսպես չեն կարող կովել: Իսկ Լայրնփոն հաճախ իր մղձավանջներում անգիտակցաբար սպանում է ընկերոջը՝ Հիդերփոյին:

Մղձավանջային երազ է պատկերված նաև Պ. Ա. Մրքթիլիփի «Հանելուկների վարպետը» եռերգության մեջ: Ռեդերլիին կնության պետք է տան նրան, ով կտիրանա թագին: Աղջիկը ներքին հուզմունքից երազում տեսնում է, որ իրեն կնության են տալիս ոչ հողեղեն մի արարածի:

### *Անմարսողությունից առաջացած մղձավանջներ*

Տագնապալի երազների համար կարող է նաև պատճառ հանդիսանալ անմարսողությունը, որի վերաբերյալ ակնարկներ կան դեռևս վաղ շրջանի արձանագրություններում: Մանկագիրները իրենց ստեղծագործություններում նմանօրինակ երազներ են ներմուծում՝ մի կողմից՝ մանուկ ընթերցողին խրատելու և հետ պահելու գիշերային որկրամոլությունից, մյուս կողմից էլ՝ այն մղձավանջային այլաբանություն ստեղծելու միջոց է, որով ընթերցողին են փոխանցվում հերոսի անգիտակցականում թաքնվող մտքերը:

Կանադացի հեղինակ Լ. Մ. Մոնթգոմերիի «Պատմասաց աղջիկը» վեպում մանուկ հերոսները որոշում են արձանագրել իրենց երազները՝ ամռանը միմյանց պատմելու համար: Եվ որպեսզի գունագեղ երազներ տեսնեն, քնելուց առաջ նրանք մեծ քանակությամբ տարատեսակ կերակուրներ են ուտում: Սակայն գեղեցիկ ու անմոռանալի երազների փոխարեն, երեխաները շատակերությունից չեն կարողանում հանգիստ քնել, իսկ արթուն ժամանակ էլ տառապում են փորացավից:

Անմարսողությունից առաջացած մղձավանջ է պատկերված նաև Դիքենսի «Սուրբ ծննդյան երգ» վիպակում: Այստեղ Սկրուջն ընկնում է մղձավանջի մեջ և տեսնում է Մարլիին, բայց ինքն իրեն սկսում է համոզել, որ Մարլիի ուրվականը հայտնվել է իրեն միայն մարսողական խանգարման պատճառով.

*“You don't believe in me,” observed the Ghost.*

*“I don't,” said Scrooge.*

*“What evidence would you have of my reality beyond that of your senses?”*

*“I don't know,” said Scrooge.*

*“Why do you doubt your senses?”*

*“Because,” said Scrooge, “a little thing affects them. A slight disorder of the stomach makes them cheats. You may be an undigested bit of beef, a blot of mustard, a crumb of cheese, a fragment of an underdone potato. There's more of gravy than of grave about you, whatever you are!”*(Dickens 1843: 20)

Ամերիկացի հայտնի արձակագիր Է. Բերնոուզի՝ Տար-  
զանի մասին պատմություններում հայտնի հերոսը գողա-  
նում և ուտում է փղի նեխած միս, որից հիվանդանում է և ը-  
նկնում մղձավանջների գիրկը:

### ***Այդ ամենը երազ էր***

«Այդ ամենը երազ էր» գրական հնարի կիրառումը  
գրականագետների կողմից ամենաշատ քննադատվողն է:  
Այն ընթերցողին զգում է անորոշության մեջ և ստիպում հե-  
տադարձ հայացք զգել պատմության վրա՝ ամփոփելու և  
նորովի վերլուծելու կարդացածը: Երազն այս դեպքում կա-  
րող է կիրառվել կա՛մ որպես միկրոհնար՝ սահմանակվելով  
մեկ դրվագով, կա՛մ մակրոհնար՝ հիմք ծառայելով ողջ պա-  
տումի համար:

«Այդ ամենը երազ էր» հնարի դասական օրինակ են «Ալիսը հրաշքների աշխարհում» և դրա շարունակությունը՝ «Ալիսը հայելու աշխարհում» երկերը: Լ. Քերոլն այս հնարի միջոցով ազատ տեղաշարժվում է մարդկային գիտակցության մեջ, ընթերցողին փոխանցում տարաբնույթ զգացմունքներ՝ խորհրդանիշերի և երևակայական պատկերների միջոցով: Հնարը հեղինակին հնարավորություն է տալիս պայմանականորեն առանձնանալու և կտրվելու իրական կյանքից:

Ն. Գեյմանի հերոսուհին՝ Քորալայնը, դուրս պրծնելով երազային աշխարհից, ոչ միայն հասկանում է, որ այդ ամենը երազ չէր, այլ նաև, որ իր փորձությունները դեռ չեն ավարտվել:

Չ. Դիքենսի Սուրբ Ծննդյան մասին պատմվող «Զանգակների ոգիները» ստեղծագործության մեջ գլխավոր հերոս Թոբի Վեքը ընկնում է զանգակատնից և մահանում: Հաջորդ երկու գլուխներում նա տեսնում է չքավորության պատճառով իր հարազատներին հասած տառապանքներն ու դժբախտությունները: Սակայն, երբ Թոբի Վեքի դուստրը փորձում է ջրում խեղդամահ անել սեփական երեխային և ինքնասպան լինել, պարզվում է, որ այդ ամենը երազ էր, և մռայլ տրամադրությունը ցրվում է: Այստեղ հեղինակը օգտագործում է «այդ ամենը երազ է» գրական հնարը, որպեսզի կարողանա ապահովել այդքան անսպասելի շրջադարձը: Սակայն անրջային հնարը միտված է գաղտնագերծելու կյանքի այն դժվարությունները, հերոսների ներքին ցավը,



որ այլ կերպ հնարավոր չէր ցույց տալ: Եվ հենց այստեղ է, որ Դիքենսը ընթերցողին է վերադարձնում այդ նույն տխուր տրամադրությունը և շեշտում, որ թեկուզ այդ սարսափելի տեսարանը երագ էր, սակայն շատերը իրականում թշվառության մեջ են և տառապում են այնպես, ինչպես պատկերված էր երագում:

### *Աշխարհավերջյան երագներ*

Այլաբերության մի տեսակ է նաև *աշխարհավերջյան երագը*: Նման օրինակներում հեքիաթի հերոսը երագպատմության ամենակարևոր պահին արթնանում է՝ այսպիսով վերջ դնելով իր իսկ տեսած երագի աշխարհին: Առանձին գրական երկերում, այդպիսին է Քերոլի «Ալիսը հայելու աշխարհում» վեպը, երագի մնացյալ անձինք (Չըրիսկն ու Շըրիսկը) անում են հնարավորինս ամեն ինչ՝ թույլ չտալու, որ երագատեսը (Ալիսը) արթնանա:

Այսպես, «Ալիսը հայելու աշխարհում» վեպում Չըրիսկն ու Շըրիսկն Ալիսին ասում են, որ և՛ Ալիսը, և՛ իրենք Սև արքայի երագի հերոսներն են, և երբ արքան արթնանա, իրենք կանհետանան մոմի լույսի պես.

*“If that there King was to wake,” added Tweedledum, “you’d go out—bang!—just like a candle!”*

*“I shouldn’t!” Alice exclaimed indignantly. “Besides, if I’m only a sort of thing in his dream, what are you, I should like to know?”*

*“Ditto,” said Tweedledum,*

*“Ditto, ditto!” cried Tweedledee.*

*He shouted this so loud that Alice couldn't help saying, “Hush! You'll be waking him, I'm afraid, if you make so much noise.”*

*“Well, it's no use your talking about waking him,” said Tweedledum, “when you're only one of the things in his dream. You know very well you're not real.” (Carroll 2004: 88)*

Հետաքրքրականն այն է, որ այս ամենը տեղի է ունենում այն դեպքում, երբ պատմությունը հենց Ալիսի երազն է: Իսկ վեպի մեկ այլ տեսարանում Ալիսը ձանձրանալով՝ որոշում է արթնացնել արքային, որպեսզի տեսնի, թե ինչ կպատահի, բայց արքային արթնացնել նրան այդպես էլ չի հաջողվում: Այսպես էլ ավարտվում է երազը՝ անհայտ մնալով, թե իրականում ո՞վ էր երազատեսը՝ Ալիսը, թե՞ Սև արքան, որը քնած էր ողջ մրցախաղի ընթացքում:

### ***Հեռագգայական երազներ***

Հեռագգայական երազների մասին խոսելիս Կ. Յունզը նշում է, որ որոշ մարդիկ ավելի զգայուն են այս առումով և ունենում են հեռագգայական երազներ: (Jung 1974: 47-48) Այդ դեպքում զարմանալի չէ Ջ.Ք. Ռոուլինգի հերոս Հարրիի հեռագգայական երազներ տեսնելու կարողությունը: Ավելին, երազային այս հնարը հարրիփոթերյան ցիկլի սյուժեի առանցքային մասն է: Տղան երազների միջոցով կարողա-

նում է հետևել իր թշնամի Սև լորդին: Վիպաշարում վերոնշված երազները ապագայագուշակ և գուշացնող բնույթ ունեն: Դրանց միջոցով է հերոսը տեղեկանում Սև լորդի չարագոծությունների մասին:

«Հարրի Փոթերը և հրե գավաթը» գրքի մի դրվագում Հարրին երագում արծվաբվին հեծնելիս տեսնում է, թե ինչպես է Վոլդեմորը Նագինիին խոստանում, որ Հարրին շուտով նրա կերակուրը կդառնա.

*“...riding on the back of an eagle owl, soaring through the clear blue sky toward an old, ivy-covered house set high on a hillside [...] “Nagini,” said the cold voice, “you are out of luck. I will not be feeding Wormtail to you, after all . . . but never mind, never mind . . .there is still Harry Potter. . .”*(J.K.Rowling 2002: 576)

Հարրին վստահ էր, որ իր այդ երագը իմաստալից տեղեկություն է հաղորդում իր թշնամի Վոլդեմորի մասին: Դպրոցի տնօրեն Դամբլդորը նրա երագը համարում է նշանակալից՝ մեկնաբանելով, որ Սև լորդի մահացու անեծքը հոգևոր կապ է ստեղծել վերջինիս և տղայի միջև: Մա Հարրիի համար ստեղծում մի նոր, չափազանց վտանգավոր երագային աշխարհ: Մղձավանջներից, մարգարեական տեսիլներից և տագնապալի երազներից բացի, նա այժմ հեռագայական կապի մեջ է թերևս աշխարհի ամենավտանգավոր կախարդի հետ:

Հարրին շարունակ իր երազներում տեսնում է մութ միջանցք, որի վերջում կողպված դուռ է: Վիպաշարի հետագա զարգացմամբ պարզվում է, որ նույն այդ դուռը առեղծվածների բաժնի դուռն է, որը լորդ Վոլդեմորը փորձում է բացել՝ այն իր տիրապետության տակ վերցնելու համար, ուստի տղան էլ հեռագգայական կապի շնորհիվ ակամա հայտնվում է կողպված դռան միջանցքում:

Ամփոփելով նշենք, որ գրականության մեջ, ինչպես իրական կյանքում, երազները ոչ միշտ են ունենում խրատական կամ կանխագուշակող բնույթ: Վերջիններս հնարավոր է սոսկ պատկերների տեսքով արտացոլեն անգիտակցականում թաքնված մտքեր, գաղափարներ, հույզեր: Երազային հնարների կիրառումը այուժեն համեմում է խորհրդավորությամբ, ինչպես նաև՝ ընթերցողին հնարավորություն տալիս ավելի խորքային պատկերացում կազմել հերոսների անհատականության և ներաշխարհի մասին:

### Գրականության ցանկ

1. Burroughs, E.R. (1919) *Jungle Tales of Tarzan* New York: Gorsset and Dunlap Publishers.
2. Camden, C. (1936) *Public Lecture on Shakespeare on Sleep and Dreams*  
[/https://scholarship.rice.edu/bitstream/handle/1911/9109/article\\_RI232106.pdf;sequence=5/](https://scholarship.rice.edu/bitstream/handle/1911/9109/article_RI232106.pdf;sequence=5/).

3. Carroll, L. (2004) *Alice's Adventures in Wonderland and through the Looking-Glass* New York: Barnes and Noble Books.
4. Dickens, Ch. (1843) *A Christmas Carol* London: Chapman and Hall.
5. Dickens, Ch. (2008) *The Chimes* Texas: Waking Lion Press.
6. Erin, Hunter (2012) *Warriors: The Yellowfang's Secret* NY: HarperCollins Publishers.
7. Freud, S. (1920) *A General Introduction to Psychoanalysis* NY: WashingtonSquare Press, Inc.
8. Gaiman, N. (2012) *Coraline* NY: HarperCollins Publishers.
9. Jung, C. G. (1974) (Translated by Hull, R.F.C.) *Dreams* Princeton: Princeton University Press.
10. McKillip, P.A. (1976) *Riddle-Master: The Complete Trilogy* NY: Ace Books
11. Montgomery, L. (1911) *The Story Girl* Boston: L. C. Page & Company, repr. New York: Grosset & Dunlap, Publishers.
12. Rowling, J.K. (2002) *Harry Potter and the Goblet of Fire* USA: Scholastic Inc.
13. Rowling, J.K. (2004) *Harry Potter and the Order of Phoenix* USA: Scholastic Inc.
14. Sipal, S.P. (2016) *A Writer's Guide to Harry Potter* CA: Deep River Press, Inc

*ISHKHAN DADYAN - Typological Classification of "Dream" as Narrative Device - "Dream" as a narrative device enjoys great popularity in literature, notably in children's literature. By awakening mysterious images in the characters' unconscious mind, authors familiarize the readers with those characters' innermost emotions and concerns. To form a clear idea of the types of "dream" as a narrative device employed in children's literature, it is necessary to group them together as per their functions and types. This article offers a classification of "dream" as a narrative device according to types, revealing the role and significance they hold in narrative structure.*

**Key words:** *dream as narrative device, typological classification, fairy-tales, symbols, nightmares, apocalyptic dreams, indigestion, gluttony, telepathic dreams, all just a dream.*

**ИШХАН ДАДЯН - типологическая классификация нарративного приема «сон» - «Сон» как нарративный прием пользуется большой популярностью в литературе, особенно в детской литературе. Авторы познакомят читателей с сокровенными эмоциями и беспокойствами персонажей путем пробуждения таинственных образов в их подсознании. Для того, чтобы сформировать четкое представление о типах нарративного приема «сон» используемого в детской литературе, необходимо сгруппировать их в соответствии с их функциями и типами. В этой статье попытаемся классифицировать нарративный прием «сон» в соответствии с типами, раскрывающими их роль и значение в структуре нарратива.**

***Ключевые слова:** сон как нарративный прием, типологическая классификация, сказки, символы, кошмары, апокалиптические сны, расстройство пищеварения, обжорство, телепатические сны, это был всего лишь сон.*